# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒՆՎԱՐԻ 2019 թվականի N 1-Ա

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1-ԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Աբովյան համայնքի ավագանու հերթական թիվ 1-ին նիստի օրակարգը՝

1.Աբովյան համայնքում 2019 թվականին < Տեղական տուրքեր և վճարներ > սահմանելու մասին

2. Աբովյան համայնքի 2019 թվականի բյուջեի հաստատման մասին

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ
6. ՍԱՆՈՅԱՆ ՖԻՐՈՒԶԱ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**<<17>> Հունվարի 2019 թվականի N 2-Ն**

### ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ» ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածների պահանջներով.

համայնքի ավագանին որոշում է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնքի 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Աբովյան համայնքի ավագանու 11.12.2018 թվականի թիվ 59-Ն որոշումը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ-0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ
7. ՍԱՆՈՅԱՆ ՖԻՐՈՒԶԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 1
Հաստատված Աբովյան համայնքի
ավագանու 17.01.2019թ. թիվ 2-Ն որոշման

# ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ» ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ‹‹Տեղական Ինքնակառավարման Մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով, ‹‹Տեղական տուրքերի և վճարների մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածների պահանջներով.

համայնքի ավագանին որոշում է՝

Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա) հիմնական շենքերի և շինությունների համար՝
մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դրամ.

բ) սույն կետի <<ա>>- ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝
200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ.
500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ.
1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ.
3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 50000 դրամ.

գ) Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝
մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 դրամ.
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի

ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի <ա> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 2500 դրամ:

4) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 200000 դրամ:

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60000 դրամ:

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույտվության համար՝ օրացուցային տարվա համար 50000 դրամ:

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 9000 դրամ

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ,

50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 20000 դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ,

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 45000 դրամ,

500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 100000 դրամ:

բ) ծխախոտի արտադրանք վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

մինչ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 9000 դրամ

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ,

50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 20000 դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ,

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 45000 դրամ,

500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 100000 դրամ:
8) Համայնքի տարածքում՝
բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.
9) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
ա) հիմնական շինությունների ներսում՝
մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,
26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7000 դրամ,
50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 10000 դրամ,
100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ,
200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30000 դրամ,
500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50000 դրամ:
բ) ոչ հիմնական շինությունների ներսում՝
մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,
26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,
50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,
100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ,
200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ,
500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 դրամ:
10) Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է
ա) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.
բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.
գ) բաղնիքների /սաունաների/ համար՝ 200000 դրամ.
դ) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ.
ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ.
զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ:
11) Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1 քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.
բ) թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ;
գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.
դ)սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ,
ե) համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ

գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ 375 դրամ,
գ)եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան՝ 150 դրամ:
12) Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 100000 դրամ:
13). Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ՝ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար յուրաքանչյուր մեքենայի համար սամանվում է՝ 10000 դրամ:
14. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և /կամ/ մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 500000 դրամ:
15) Սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ կետերի դրույքաչափերը կիրառվել են 0.5 գործակցով:

Տեղական վճարներ
16) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 1000դրամ:

17) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար, տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարներ սահմանվում է՝ 10000 դրամ.
18) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում, անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ 5000 դրամ:
19) Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ 1000 դրամ.
20)Սահմանել համայնքային անասնաբուժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայություններից օգտվողների համար հետևյալ վճարները՝
1. Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն – 500 դրամ
2. Ծննդօգնություն
2.1 թեթև միջամտություն -1000 դրամ
2.2 ծանր միջամտություն - 5000 դրամ
3. արյուն առում կամ նշում առում ՝մանր կենդանիներ – 100 դրամ, խոշոր կենդանիներ – 200 դրամ, բացառությամբ < Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների
4. կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքարը – 200 դրամ
5. ախտահանություն – 1քմ -200 դրամ
6. միջատազերծում (դեզինֆեկցիա) – 1 քմ – 100 դրա
7. կրծողների ոչնչացում ( դերատիզացիա) – 1քմ – 200 դրամ
8. արհեստական սերմնավորում – 5000 դրամ
9. կենդանու հերձում՝ մանր կենդանի -1000 դրամ ,խոշոր կենդանի – 3000 դրամ
10. կենդանու բուժում՝ կախված հիվանդությունների տեսակից և կենդանու տեսակից՝ յուրաքանչյուր

այցելությունը  մանր կենդանի – 1000 դրամ , խոշոր կենդանի  - 2000 դրամ
11. կենդանիների նախասպանդային  զննում՝ կախված կենդանու տեսակից՝ մանր կենդանի – 100 դրամ, խոշոր կենդանի – 2000 դրամ
12. կենդանիների  հետսպանդային  զննում ( մինչև 2019թ հուլիս ամիսը) մանր կենդանի -1000 դրամ, խոշոր կենդանի – 2000 դրամ :

.21) Տեղական  ինքնակառավարման  մարմնի  կողմից աղբահանությունը  կազմակերպելու  համար աղբահանության  վճար սահմանել  յուրաքանչյուր  ամսվա  համար՝

ա) յուրաքանչյուր  բնակչի համար 100 դրամ

բ)Համայնքում իրավաբանական անձանց աղբահանության վճարի չափ սահմանել   հետևյալ սակագներով՝

1. Առևտրի( այդ թվում շուկաների) , հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ մատուցողներ – 50 դրամ/1քմ:
2. Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ-20 դրամ/քմ:
3. Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ -6 դրամ/քմ:
4. Կրթական,մշակութային, առողջապահական, սպորտային,  գիտահետազոտական շինություններ - 3դրամ/քմ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  ՔԱՐՏՈՒՂԱՐ՝          Վ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՀՈՒՆՎԱՐԻ 2019 թվականի N 3 -Ն

2019 ԹՎԱԿԱՆԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները.

համայնքի ավագանին որոշում է`

1.ՀԱՍՏԱՏԵԼ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 Թ -Ի ԲՅՈՒՋԵՆ

ԲՅՈՒՋԵՅԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ - 41424.111.9 ՀԱԶ. ԴՐԱՄ

1. Հարկեր և տուրքեր --- 8319.0 հազ. դրամ

1.1 հողի հարկ --- 2626.8 հազ. դրամ
1.2 Գույքահարկ շենքի և շինությունների ---116.5հազ. դրամ
1.3 Գույքահարկ փոխադրամիջոցներից --- 5399.7 հազ. դրամ
1.4 Տեղական տուրք --- 176.0հազ. դրամ ,
այդ թվում` ծխախոտի վաճ. թույլտվություն --- 88.0 հազ. դրամ
խմիչքների վաճ. թույլտվություն --- 88.0 հազ. դրամ
2.Հողերի վարձակալությունից մուտքեր --- 300.0 հազ. դրամ
3.Աղբահանության վճար ---- 1531.5 հազ. դրամ
այդ թվում`
իրավաբանական անձ ---- 67.5 հազ. դրամ
ֆիզիկական անձ ---- 1464.0 հազ. դրամ
3. Ընթացիկ ներքին դրամաշնորհներ ---25227.5 հազ.դրամ,
այդ թվում`դոտացիա` --- 25227.5 հազ. դրամ
4.Գանձապետական հաշվի մնացորդը --- 6046111.9 հազ. դրամ
այդ թվում`
ա)Վարչական բյուջեի մնացորդ --- 3684750.90 հազ. դրամ
բ) Ֆոնդային բյուջեի մնացորդ --- 2361.394 հազ. դրամ

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ - 35378.0 հազ. դրամ

1.ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱՐԱՏ --- 17240.0 հազ.դրամ

4111--- 13600.0 հազ. դրամ --- աշխատավարձ

4212 --- 700.0 հազ. դրամ --- էլեկտրոէներգիայի և գազի ծախսեր

4213--- 100.0 հազ. դրամ --- կոմունալ ծառայությունների ծախսեր այդ թվում՝ ջրի և դեռատիզացիայի ծախսեր

4214 ---350.0 հազ.դրամ --- հեռախոսակապի, ինտերնետ կապի և դոմենի ծառայությունների ծախսեր

4215 --- 60.0 հազ դրամ ---ավտոմեքենայի ապահովագրական ծախսեր

4231--- 215.0 հազ.դրամ ---վարչական ծառայությունների ծախսեր՝ գույքահարկի և հողի հարկի հաշվառման ծառայությունների գումար

4232--- 225.0 հազ.դրամ --- համակարգչային ծառայություն

4234 --- 150.0 հազ. դրամ ---տեղեկատվական ծառայությունների ծախսեր ( թերթերի գումար ) , թերթում հայտարարության տպագրման գումար

4235--- 30.0 հազ. դրամ --- աուդիտորական ծառայություն

4239--- 50.0 հազ. դրամ --- ընդանուր բնույթի այլ ծառայություն

4241---250.0 հազ. դրամ --- մասնագիտական ծառայություն

4252 --- 250.0 հազ. դրամ ---մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում

4261 --- 200.0 հազ. դրամ --- գրասենյակային նյութեր

Այդ թվում՝ ( թուղթ, մատիտ, գրիչ, հաշվիչ, ձնաթուղթ, կարիչ, դակիչ, կնոպկա, գրչաման, սեղանի և պատի օրացույցներ, ռեգիստր, գրասենյակային գրքեր, քարթրիջի լիցքավորում, ֆլեշկա և այլն )

4264 --- 800.0 հազ. դրամ --- տրանսպորտային նյութեր՝ բենզին և ավտոպահեստամասեր

4267--- 50.0հազ. դրամ --- կենցաղային նյութերի ձեռք բերման ծախսեր

( ավել, օճառ, պատուհան լվանալու հեղուկ, մաստիկա և այլն )

4269 --- 200.0 հազ. դրամ --- տնտեսական ապրանքներ, այդ թվում՝

( դռան փական, էլ. հաղորդալար ,,խաչուկ,, ժամ, լույսեր, աթոռներ, պահարաններ, շերտավարագույրներ, և կառնիզներ)

4823---10.0 հազ. դրամ--- ավտոմեքենայի տեխ. զննում

## 2.ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ - 1380.0 ՀԱԶ. ԴՐԱՄ

4729 --- 900.0 հազ. դրամ --- ֆինանսական աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին, նորածին երեխաների ընտանիքներին

4726--- 400.0 հազ. դրամ --- հուղարկավորության նպաստ՝ մահացած անձանց ընտանիքներին

4239--- 80.0 հազ.դրամ ---ընդհանուր բնույթի այլ ծառայություններ

## 3. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ --- 250.0 ՀԱԶ. ԴՐԱՄ

4261 --- 250.0 հազ. դրամ ---գրենական պիտույքներ՝ սեպտեմբերի 1-ի կապակցությամբ

4.ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ --- 100.0 ՀԱԶ. ԴՐԱՄ

4269 --- 100.0 հազ. դրամ ---հատուկ նպատակային նյութեր՝ վերջին զանգի կապակցությամբ աշակերտների նվերների գումար

5. ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐ. ՑԱՆՑԻ ՇԱՀԱԳՈՐԾ. ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ --- 100.0 ՀԱԶ. ԴՐԱՄ

4241 – 100.0 հազ. դրամ –մասնագիտական ծառայություն

6. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆ. ՄԱՔՐՈՒՄ --- 1520.0 ՀԱԶ. ԴՐԱՄ

4213 --- 1500.0 հազ. դրամ ---աղբահանման ծառայության գումար

4823--- 50.0 հազ. դրամ ----պարտադիր վճար՝ բնապահպանության վճար

7. ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ --- 900.0 ՀԱԶ. ԴՐԱՄ

4239 --- 350.0 հազ. դրամ --- մշակույթային միջոցառումների հետ կապված ծառայության մատուցման գումար

4269 --- 550.0 հազ. դրամ --- տիարն ընդ առաջ, մարտի 8-ի, հունիսի 1-ի՝ երեխաների պաշտպանության օրվա և այլն

8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ --30.0 ՀԱԶ. ԴՐԱՄ

4819 --- 30.0 հազ. դրամ --- ֆինանսական աջակցություն

9. ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ --- 70.0 ՀԱԶ. ԴՐԱՄ

4239 --- 70.0 հազ. դրամ --- թատերական ներկայացումների ծառայությունների գումար

10.ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՈՒՄ-- 400.0 ՀԱԶ. ԴՐԱՄ

4241--- 200.0 հազ. դրամ-- հողերի չափագրման գումար

4823---200.0 հազ. դրամ -- վկայականների ձեռք բերման և պետական տուրքի գումար

11. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ –7000.0 ՀԱԶ.ԴՐԱՄ

4511---7000.0 հազ.դրամ – ներքին սուբսիդիա՝ մանկապարտեզի գումար

12. ՈՉ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱ -- 2600.0 ՀԱԶ. ԴՐԱՄ

4657 -- 2600.0 հազ. դրամ --արևային ֆոտովոլտային վահանակների գումար

13. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ ---500.0 ՀԱԶ. ԴՐԱՄ

4241--500.0 հազ. դրամ --- մասնագիտական ծառայություն

14. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ --- 2500.0 ՀԱԶ. ԴՐԱՄ

4891--- 2500.0 հազ.դրամ՝ պահուստային միջոցներ

ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ --- 6046111.9 ՀԱԶ. ԴՐԱՄ

1. ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ ---1370.0 ՀԱԶ. ԴՐԱՄ

5112 --1300.0 հազ. դրամ ---վարչական շենքի [illegible]

5134 -- 70.0 հազ. դրամ ---նախագծային աշխատանքներ

2. ԿԱՆԱՉ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ --- 240.0 ՀԱԶ. ԴՐԱՄ

5131 — 240.0 հազ. դրամ --- աճեցվող ակտիվներ

3. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ --- 900.0 ՀԱԶ. ԴՐԱՄ

5122 --- 600.0 հազ. դրամ --- դասասենյակի դռներ

5134 --- 300.0 հազ. դրամ – նախագծային աշխատանքներ

4. ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱԶԱՏ ԺԱՄԱՆՑ --- 30.0 ՀԱԶ. ԴՐԱՄ

5134 -- 30.0 հազ. դրամ --- մշակույթ և ժամանց

5. ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ ---- 3506114.9 ՀԱԶ. ԴՐԱՄ

4891 --- 3506114.9 հազ. դրամ --- պահուստային ֆոնդ

2. Ուժը կորցրած ճանաչել Աբովյան համայնքի ավագանու 24.12.2018թ-ի թիվ 64-Ն որոշումը :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ
6. ՍԱՆՈՅԱՆ ՖԻՐՈՒԶԱ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**